Հավելված
ՀՀ կառավարության 2018 թ.
փետրվարի 1-ի նիստի N 4
արձանագրային որոշման

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ 2-ՐԴ ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱ-ԿԱՅԱՆԻ 2-ՐԴ ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ՏՈՒՐԲԻՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ԷՆԵՐԳԱՍՏԵՂԾ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Հայկական ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգման շրջանակներում Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի տուրբինային արտադրամասի էներգաստեղծ սարքավորումների արդիականացման միջոցառումների համալիր իրականացման ծրագրում ներառված միջոցառումներն են՝

| | |
|---|---|
| Ծրագրի իրականացման համար պատասխանատու կողմերը | «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ (ՀԱԷԿ) – Պատվիրատու<br>«Ռուսատոմ Սերվիս» ԲԸ – Կապալառու |
| Ծրագրի առարկան | ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի մեքենասրահի էներգաստեղծ սարքավորումների արդիականացման աշխատանքների համալիր. արդիականացվող համակարգերի նախագծում, սարքավորումների և նյութերի մատակարարում, մոնտաժում, վերանորոգում, շինարարություն, գործարկում-կարգաբերում, շահագործման հանձնում: |
| Ծրագրի սարքավորումների կազմը | Արդիականացման /փոխարինման/ վերանորոգման ենթակա են ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի տուրբոագրեգատներ 3-ի և 4-ի էներգաստեղծ սարքավորումների հետևյալ տարրերը, շինարարական կառուցատարրերը, համակարգերը (այսուհետ՝ սարքավորում).<br>1.Ջերմամեխանիկական սարքավորում.<br>1.1 Երկու տուրբոագրեգատների կոնդենսատորների արդիականացում<br>1.2 Ջատիչ-շոգեգերտաքացուցիչների փոխարինում - 4 լրակազմ<br>1.3 Ռ-220-44-1 տուրբինների արդիականացում - 2 լրակազմ<br>1.4 Խտուցքահան պոմպերի (ԿԷՀ) փոխարինում – 6 հատ<br>2. Էլեկտրատեխնիկական սարքավորումներ.<br>2.1 Բլոկային տրանսֆորմատորների փոխարինում - 2 լրակազմ<br>2.2 Տուրբոգեներատորների փոխարինում (ստատոր և ռոտոր)- 2 լրակազմ<br>2.3 Ինքնագրգռման թիրիստորային համակարգի փոխարինում - 2 լրակազմ<br>2.4 Գեներատորային հոսանահաղորդիչների և զրոյական արտանցիչների փոխարինում - 2 լրակազմ<br>2.5 Պաշտպանությունների գոյություն ունեցող ռելեական համալիրի ապարատուրաների և «գեներատոր-տրանսֆորմատոր» բլոկի ավտոմատիկայի փոխարինում - 2 լրակազմ<br>3.Օժանդակ համակարգեր.<br>3.1 Տուրբոգեներատորի օժանդակ համակարգերի |

| | |
|---|---|
| | (գազամատակարարման, գազահովացման, ստատորի փաթույթի ջրային հովացման, տուրբոգեներատորի լիսեռի խցվածքների յուղամատակարարման, տուրբոգեներատորի օժանդակ սարքավորումների հովացման ջրի) արդիականացում. (տուրբագեներատորի մատակարարման ծավալի մեջ)<br>3.2 Էլեկտրոլիզային տեղակայանքի փոխարինում<br>4.Շինություններ և կառուցվածքներ.<br>4.1 Տուրբինային արտադրամասի շինությունների և կառուցվածքների վերանորոգում (այսուհետ՝ ՇևԿ) – տուրբագեներատորի և ֆերմայի հիմքի վերանորոգման աշխատանքների առաջարկվող ծավալը՝ ըստ համալիր հետազոտության արդյունքների:<br>5. Աշխատանքների ծավալն ընդգրկում է .<br>5.1 1.4, 2.3, 2.4, 2.5, 3 և 4 կետերում նշված սարքավորումների և դրանց առնչվող, արդիականացվող սարքավորման աշխատունակության համար անհրաժեշտ հարակից համակարգերի արդիականաց-ման/փոխարինման աշխատանքային և նախահաշիվային փաստաթղթերի մշակումը:<br>5.2 2.4 և 3.2. կետերում նշված սարքավորումների պատրաստումը և մատակարարումը, շինարարական-մոնտաժային և գործարկման-կարգաբերման աշխատանքների կատարման համար տեխնոլոգիական զինման նյութերի, գործիքների, միջոցների մատակարարումը՝ աշխատանքային փաստաթղթերին համապատասխան:<br>5.3 Շինարարական-մոնտաժային աշխատանքների (ՇՄԱ), գործարկման-կարգաբերման աշխատանքների (ԳԿԱ) և անհրաժեշտ փորձարկումների կատարումը՝ արդիականացված համակարգերի և սարքավորումների համաբլոկային (դինամիկ) փորձարկումները ներառյալ: |
| Ծրագրի գինը | 57 117 530 (հիսունյոթ միլիոն հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր երեսուն) ԱՄՆ դոլար:<br>Գինը հանդիսանում է ամբողջական և սահմանային՝ հաշվարկված Ծրագրի կատարման ողջ ժամանակահատվածի համար և Ծրագրի իրականացման ընթացքում այն ենթակա է ճշգրտման՝ հաշվի առնելով անցկացվող գնման ընթացակարգերը:<br>Ծրագրի աշխատանքների կատարման վրա չծախսված միջոցները խնայողություն չեն և պետք է ուղղվեն Ռուսաստանի Դաշնության կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև 2014թ. դեկտեմբերի 20-ին կնքված ՄԿ Համաձայնագրով նախատեսված Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի երկարացման ծրագրի իրականացմանը: |
| Ծրագրի իրականացման ժամկետները | Ծրագրի իրականացման հիմնական ժամկետներն են 01.01.2018 - 31.12.2019:<br>Աշխատանքների իրականացման և սարքավորումների մատակարարման մանրամասն ժամկետները որոշվում են ըստ աշխատանքների օրացուցային պլանների, որոնք մշակվում և համաձայնեցվում են Պատվիրատուի և Կապալառուի հետ յուրաքանչյուր մասնավոր տեխնիկական առաջադրանքի, տեխնիկական պահանջի, մասնագրի համար: |

| Մեքենասրահի էլեկտրատեխնիկական սարքվորումների արդիականացում | Սարքավորումների /նյութերի մատակարարում | Նախագծահետա-զոտական աշխատանքներ (ՊԻՐ) | Շինարարական-մոնտաժային աշխատանքներ (ՇՄՐ) | Գործարկման-կարգաբերման աշխատանքներ (ՊՆՐ) | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Տուրբագեներատորի արդիականացում | պայմանագրված | պայմանագրված | 6 403,39 | 1 280,68 | 7 684,07 |
| Բլոկային տրանսֆորմատոր | պայմանագրված | պայմանագրված | 2 804,65 | 560,93 | 3 365,58 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Էլեկտրոլիզային կայանք (ՀԷՍ), օժանդակ համակարգեր, հոսանահաղորդիչներ և այլ մանր սարքավորումներ | 5 000,00 | 2 500,00 | 4 000,00 | 800,00 | 12 300,00 |
| Մեքենասրահի ջերմամեխանիկական սարքվորումների արդիակա-նացում | | | | | |
| Տուրբինայի արդիականացում | պայմանագրված | պայմանագրված | 15 960,00 | 2 394,00 | 18 354,00 |
| Զատիչ-շոգեգերտաքացուցիչ | պայմանագրված | պայմանագրված | 4 320,00 | 648,00 | 4 968,00 |
| Կոնդենսատորի արդիականացում | պայմանագրված | պայմանագրված | 7 276,00 | 1 091,40 | 8 367,40 |
| Խտուցքահան պոմպեր (ԿՅՀ) | պայմանագրված | - | 810,82 | 121,62 | 932,44 |
| Սարքավորումների տարրերի, շենքեր և շինությունների մասով վերանորոգման և շինարարական-մոնտաժային աշխատանքների իրա-կանացում՝ ներառյալ անհրա-ժեշտ տեխնիկական փաս-տաթղթերի մշակումը | - | 346,04 | 800,00 | - | 1 146,04 |
| Ծրագրի գինը | | | | | **57 117,53** |

Ծրագրի գնի հաշվարկը (մլն ԱՄՆ դոլար)

1. Հայկական ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարացման շրջանակներում հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի տուրբինային արտադրամասի էներգաստեղծ սարքավորումների արդիականացմանն ուղղված միջոցառումների համալիրի իրականացման ծրագրի պայմանները.

| | |
|---|---|
| Ծրագրի փոխկապակցվածությունը պայմանագրի հետ | 1) Ծրագրի իրականացման նպատակով լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ՝ ԼՀ) կնքվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև՝ ՀՀ Կառավարության հանձնարարականով և ընդունվում է ֆինանսավորման՝ համաձայն 2015 թվականի փետրվարի 5-ի «ՀՀ Կառավարության և ՌԴ Կառավարության միջև՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների ֆինանսավորման համար ՀՀ Կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին» համաձայնագրի (այսուհետ՝ ՄԿՀ) դրույթների<br>2) Լրացուցիչ համաձայնագրի լրացումները ստորագրվում են Պատվիրատուի և Կապալառուի կողմից՝ ըստ գնումների ընթացակարգերի արդյունքների, որոնք իրականացվում են Կապալառուի կողմից և ենթակա չեն քննարկման ՀՀ կառավարության և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության համակարգին օտարերկյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային ու դրամաշնորհային միջոցների հաշվին նախապատրաստվող և իրականացվող ծրագրերի Կառավարման խորհրդի մակարդակով: Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության և «Ռուսատոմ Սերվիս» բաժնետիրական ընկերության միջև 2015 թվականի հունիսի 1-ին կնքված N309/688-Д պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող լրացուցիչ համաձայնագրերի լրացումները՝ համաձայն ՄԿՀ-ի դրույթների, ստորագրումից անմիջապես հետո ուղարկվում են ՀՀ Ֆինանսների նախարարության՝ ֆինանսավորումը ընդունելու հաստատումն ստանալու համար: |
| Մատակարարների / Կապալառուների ներգրավման | 1) Աշխատանքներն սկսելուց առաջ Պատվիրատուն և Կապալառուն ստորագրում են Մասնավոր տեխնիկական առաջադրանք (ՄՏԱ), Տեխնիկական պահանջներ (ՏՊ), մասնագիր և աշխատանքների |

| | |
|---|---|
| պայմանները | օրացուցային պլան<br>2) Ենթակապալառուի ընտրության նպատակով Կապալառուն իրականացնում է գնումների ընթացակարգեր՝ համաձայն «Ռոսատոմ» Պետական կորպորացիայի գնումների միասնական ճյուղային ստանդարտի (ԵՕՍՋ) պահանջների՝ Պատվիրատուի հետ համաձայնեցված և նրա կողմից ստորագրված Տեխնիկական առաջադրանքի (ՏԱ), Տեխնիկական պահանջների (ՏՊ), մասնագրերի և աշխատանքների օրացուցային պլանի հիման վրա:<br>3) Գնումների ընթացակարգն իրականացվում է Կապալառուի կողմից՝ ներգրավելով Պատվիրատուի ներկայացուցիչներին՝ գնման ընթացակարգի մասնակիցների առաջարկները տեխնիկական մասով գնահատելու համար: Գնումների ընթացակարգի ձևը որոշվում է Կապալառուի կողմից՝ ԵՕՍՋ-ի պահանջներին համապատասխան:<br>4) Ըստ գնման ընթացակարգի արդյունքների Կողմերը ստորագրում են ԼՀ լրացում՝ գին, Մասնավոր տեխնիկական առաջադրանք (ՄՏԱ), Տեխնիկական պահանջներ (ՏՊ), մասնագիր և աշխատանքների օրացուցային պլան հավելվածներով:<br>5) Կապալառուն իրավունք ունի ներգրավելու ցանկացած անհրաժեշտ քանակի ենթակապալառու կազմակերպությունների, ենթամատակարարների և արտադրող գործարանների՝ Մասնավոր տեխնիկական առաջադրանքի (ՄՏԱ), Տեխնիկական պահանջների (ՏՊ), մասնագրերի պահանջները որակով և նշված ժամկետում կատարելու համար: |
| Վճարման պայմանները | 1) Կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների, մատակարարված սարքավորումների վճարումն իրականացվում է Կապալառուի և Պատվիրատուի կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտերի հիման վրա:<br>2) Կապալառուն իրավունք ունի իր հայեցողությամբ՝ առանց Պատվիրատուի հետ համաձայնեցնելու, սակայն տեղեկացնելով վերջինիս, վերաբաշխել միջոցները ԼՀ ծախսերի վերաբերյալ հոդվածների միջև՝ չգերազանցելով ծրագրի գինը:<br>3) Կապալառուն եռամսյակը մեկ տեղեկացնում է Պատվիրատուին Լրացուցիչ համաձայնագրի՝ փաստացի պայմանագրված, կատարված և ֆինանսավորված աշխատանքների ծավալների մասին:<br>դ) Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը «Վնեշէկոնոմբանկ» (Պետական կորպորացիա «Բանկ ռազվիտիյա ի վնեշնէկոնոմիչեսկոյ դեյատելնոստ» («Внешэкономбанк» (Государственная корпорация «Банк развития и внешнеэкономической деятельности» (ВЭБ) ներկայացնելու օրվանից սկսած ավելի քան 60 (վաթսուն) օրացուցային օրվա ընթացքում ԼՀ-ով մատակարարված սարքավորման դիմաց, ինչը հաստատվում է տրանսպորտային ապրանքագրով և Պատվիրատուի լիազորված ներկայացուցչի կողմից ստորագրված սարքավորման ընդունման–հանձնման ակտով, Կապալառուի կողմից ակրեդիտիվով վճարը չստանալու դեպքում, Կապալառուն իրավունք ունի կասեցնել մատակարարումների իրականացումը և դիմել Պատվիրատուի աջակցությանը խնդրի լուծման հարցով, իսկ Պատվիրատուն պարտավորվում է Կապալառուին տրամադրել բազմակողմանի աջակցություն՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ դիմելու և տվյալ իրավիճակի կարգավորմանն ուղղված, իրենից կախված այլ անհրաժեշտ գործողությունների իրականացման միջոցով: |